№ 160 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 29 1904 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 29 № 160

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Ընդունելութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խօլերայի դէմ. Նամակ Ալէքսանդրապոլից. Նամակ Օղէսայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մակար Եկմալեանի մօտ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Մշակի» մէջ տպված այսօրվայ հեռագիրներից, մեր ընթերցողները կը տեսնեն, որ Ամերիկայի Միացեալ-Նահանգների և Թիւրքիայի մէջ յարաբերութիւնները այնքան սուր կերպարանք են ստացել, որ Կ. Պոլսի ամերիկական դեսպանը դադարեցրել է իր բանակցութիւնները Բարձր Դրան հետ և այսուհետև վիճելի խնդիրների քննութիւնը պէտք է կատարվի անմիջապէս Բ. Դրան և ամերիկական արտաքին գործերի մինիստր Հէյի միջև։

Միացեալ-Նահանգների և Թիւրքիայի մէջ անհամաձայնութիւնները նոր չեն։ Նրանք մօտ տասն տարվայ գոյութիւն ունեն և վերաբերում են զանազան խնդիրների։ Հազիւ մի խնդրի առիթով կարելի էր դառնում մի որ և է փոքր ի շատէ բաւարար համաձայնութիւն կայացնել, առաջ էին գալիս նոր անհամաձայնութեան կէտեր և դարձեալ սկսվում էին բանակցութիւններ երկու պետութիւնների մէջ։

Ամերիկան ունի Թիւրքիայում բազմաթիւ հպատակներ և մի շարք հիմնարկութիւններ։ Հպատակների մէջ մեծ տեղ են բռնում միսիոնէրական կազմակերպութիւնների պատկանող երկու սեռի անձեր, իսկ բացի դրանցից արհեստաւորներ, գործակալներ, վաճառականներ։ Հաստատութիւններից յիշենք ամերիկացիների ձեռքով հիմված դպրոցները, արբանոցները, հիւանդանոցները։

Վերջին տարիներս Ամերիկայի հպատակների կազմը մեծացաւ նաև հայ տարրով, որի քանակը այժմ հասնում է մօտ 20000 հոգու։ Այդ հայերը, իբրև Ամերիկայի քաղաքացիներ, իրաւունք էին ձեռք բերում գնալ ազատօրէն ամեն մի երկիր, որոնց թւում և Թիւրքիա և վայելել այն բոլոր ազատութիւնները, որ ունեն Ամերիկայի մեծ պետութեան քաղաքացիները։ Թիւրքիայի կառավարութիւնը հաշտ աչքով չէր նայում այդ նոր ամերիկացիների վրա և տրամադրութիւն չէր ցոյց տալիս տեսնել նրանց իր պետութեան սահմանների մէջ։

Թիւրքիան մինչև այժմ գեռ չէ վճարել այն գումարները, որ ստացել են Ամերիկայի հպատակները և ամերիկական հիմնարկութիւնները Փոքր-Ասիայի յայտնի խռովութիւնների ժամանակ։ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը մի քանի անգամ յիշեցրել է Թիւրքիային նրա խոստումների մասին, բայց արդիւնքը եղել է աննշան. Բ. Դուռը ձգձգել է գործը և ժամանակաւոր մտացութեան մատնել նրան։

Ամերիկայի Միացեալ-Նահանգների կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում, որ նրա ձայնը Օսմանեան պետութեան սահմաններում լսելի լինի նոյն այժմով և հեղինակութեամբ, ինչպէս եւրոպական մեծ պետութիւնների ձայնը։ Բայց Թիւրքիան, որ վարպետ է քաղաքագիտական խաղերի մէջ, իր համար անձեռնտու դէպքերում յիշեցնել է տալիս Ամերիկային, որ նա չէ մասնակցել եւրոպական կօնգրէսներին և չէ ստորագրել այն դաշնագիրները, որ կապել են եւրոպական պետութիւնները Թիւրքիայի հետ։

Իսկ Ամերիկայի շահերը Թիւրքիայի հողերում տարէցտարի մեծանում են և ճիւղաւորվում։ Փոքր-Ասիայից այժմ Ամերիկա են արտահանվում գորգեր, բուրդ, մատուտակ, կրճղ և շատ ուրիշ առարկաներ, իսկ նրանց փոխարէն ստացվում են երկաթեղէն և արդիւնագործական ապրանքներ։

Եւ, անկասկած, Միացեալ-Նահանգների կառավարութիւնը ցանկանում է, որ Թիւրքիան բաց լինի նրա հպատակների և նրա առևտրի համար, իբրև մի ազատ ասպարէզ գործունէութեան համար։ Նա ցանկութիւն ունի շատ տեղ հիւպատոսութիւններ հիմնել, որպէս զի հնարաւորութիւն ունենայ իր շահերը պաշտպանել արժանաւոր կերպով։

Ամերիկական պահանջների ծաւալը փոքրացել և մեծացել է զանազան ժամանակներ, համաձայն առաջ ծղված խնդիրների կարևորութեան։ Ներկայումս մեր առաջն է ամերիկական լուրջ պահանջների մի էջը, որ գրաւել է ընդհանուր ուշադրութիւն իր վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱՅԻ ԴԷՄ

Կան ճշմարտութիւններ, որոնց կրկնութիւնն օգտակար է։ Շատ-շատերը գիտեն դրանց գոյութիւնը, բայց միշտ մոռանում, անուշադիր են թողնում։ Անվերջ պէտք է կրկնել, պէտք է զզզզալ մարդկանց ականջում այդ ճշմարտութիւնները, որպէս զի նրանք վերջ ի վերջոյ մի օր միս ու արիւն դառնան բոլորի համար։

Ահա այդպիսի մի քանի «ամեն-մունը» ճշմարտութիւններ ուզում եմ առաջ բերել այս օր «Մշակ»-ի ընթերցողների համար։

„Нов." լրագրի աշխատակիցներից մէկը՝ պ. Լզով, խօսակցութիւն է ունեցել մեր «պատուական հիւրի», խօլերայի մասին մի փորձված ու հեղինակաւոր անձի հետ։ Այդ անձը Պետերբուրգի բժշկական վերատեսուչ Վ. Ի. Սկաբիչեվսկին է։ 1892—93 թուերին նա ուղարկված է եղել Լիւբլին մաքառելու համաճարակի դէմ։ Իսկ այդ աղքատ ու ողորմելի քաղաքի 60,000 բնակիչներից 2,000 հոգի մեռել են խօլերայից այդժամանակամիջոցում։ Ուրեմն՝ իր աչքով տեսել, իր կեանքի վտանգով կռիւ է տվել պ. Սկաբիչեվսկին խօլերայի դէմ. նա լաւ է ճանաչում այդ անատամ հրէշին։

Ռուսաստանը դեռ ևս վտանգի մէջ չէ, կարծում է պ. Սկաբիչեվսկին, որովհետև դեռ Գովկասը վարակված չէ, ոչ էլ Անդրկասպեան երկիրը։ Թաշքից, յետոյ էլ Բագուից յուրեր են հասել, որ առաջինում 2, երկրորդում մէկ դէպք է պատահել։ Բայց դեռ ապացուցված չէ արդեօք դա խօլերա է, թէ խօլերինա, խիստ փորհարինք, որ յաճախ պատահում է ամառները։

Թէև ամառն արդէն մօտենում է իր վախճանին, բայց դա ոչ մի մխիթարութիւն չէ, խօլերան սկսում է առ հասարակ ամառվայ սկզբին և իր զարգացման գագաթնակէտին հասնում է օգոստոս և սեպտեմբեր ամիսներին։ Կը նշանակէ, դեռ նա կարող է գալ, եթէ հարկաւոր նախազգուշութիւնները ձեռք չառնվեն Մէջին Ասիայում և մանաւանդ, Անդրկովկասում։

Վերջապէս, նա կարող է գալ և հետևեալ գարնան վերջերին։

Խօլերան ընդհանրապէս բերվում է ուղղակի։ Գալիս է մի հիւանդ, նրանից բացիլներն ընկնում են զանազան ուտելիքների և խմելիքների մէջ և վարակում ուրիշներին։

Երբ մի անգամ արդէն բերվում է նա մի երկիր, այնուհետև նրա ամենաուժեղ տարածողը լինում է ջուրը։ Կերակուրն առ հասարակ այնքան էլ չէ նպաստում մեզանում խօլերայի տարածմանը, մանաւանդ Պետերբուրգում։ Նոյն իսկ ամենաաղքատ բանւոր դասակարգի կերակուրն այդ տեսակէտից բաւական մեծ ապահովութիւն է ներկայացնում։ Տարբեր է Ջրի հարցը։ Պետերբուրգի անդրգետային մասերն այնպիսի վիճակի մէջ են, որը ցած է ամեն տեսակ կրիտիկայից։ Զրքամիչ (ֆիլտր) չը կայ. գնացքի խողովակներն են մտնում ամեն տեսակ աղտեղութիւններ։ «Կատարված հետազօտութիւններն ապացուցին, որ մեր անդրգետային մասերի բնակիչները խմում են ջուր՝ պարարտացրած մարդկային կղկղանքներով»։

Ջրի հարցի վերաբերմամբ արտասահմանում այնպիսի խիստ օրէնքներ են դրված, որոնցից մենք կը սարսափէինք և անպատճառ «դրակօնական» կանոնանէինք նրանց։ Օրինակ՝ եթէ Անգլիայում մի տեղ՝ ջրի կեղտոտութեան պատճառով՝ մահացութիւնն աճում է, ամբողջ տեղական ինքնավարութիւնը ենթարկվում է պատասխանատուութեան։

Երջանիկ երկիր։

Խօլերայի տարածվելու արագութիւնը և նրա այժը կախված են ձեռնարկված սանիտարական միջոցներից, որոնք բոլորը միասին վերցրած կրում են «մաքրութիւն» անունը։

Ընդհանրապէս չը պէտք է երբէք մոռանալ, որ խօլերայով վարակվում են միայն այն ժամանակ, երբ բացիլները անմիջապէս բերնով մտնում են սամոքսը։

Ահա այդ երևոյթն աչքի առաջ ունենալով, պէտք է ձեռնարկել և սանիտարական միջոցների։

Առաջին և կարևորագոյն տեղը բռնում է ջուրը։ Պէտք է ունենալ շատ լաւ պաշտպանված աղբիւրի ջուր, որի ականջները բաց չը լինեն և ջուր խմելու ամաններն էլ մաքուր լինեն։ Բայց որովհետև այդ պայմանը սակաւ է լինում իրականութեան մէջ՝ մանաւանդ քաղաքներում, դրա համար պէտք է խմել եռացրած ու պաղեցրած ջուր։

Երկրորդ տեղը բռնում է կերակուրը։ Զը պէտք է ուտել հում արժութիւ, կանաչեղէն ու պտուղներ, որովհետև կարող են նրանց հետ բացիլներ ընկնել ստամոքսը։

Գ. Պօլսի երաժշտական ճեմարանի պրոֆէսսոր է նշանակված. յայտնի է, որ Եկմալեան Թաշճեանի ընդունակ աշակերտներից մէկն էր և եկեղեցական երաժշտութեան մէջ նրա տաղանդաւոր յաջորդը։ Բայց երբ ես շօշափեցի նրա սրտի ամենազգայուն, ամենանուրբ լարը—Եկմալեանի ձայնագրած պատարագի արարողութիւնը—նրա թմրած աչքերում մի անսովոր կայծ վառվեց և նա ժպիտը երեսին շտապեց ինձ շնորհաւորել, որ նրան վերջապէս թոյլ է տրված Պետերբուրգում իր խմբով ամբողջ պատարագը երգել քառաձայն...

Այստեղ հիւանդի եղբայրը ընդմիջեց մեր խօսակցութիւնը և պատմեց՝ թէ ինչպէս Վաղարշապատում՝ անսալով Եկմալեանի պահանջին նա մի անգամ տարաւ նրան Էջմիածնի Մայր տաճարը պատարագի ժամանակ և յետոյ զղջաց, որ այդ քայլն արեց. Եկմալեան չը հաւանելով եկեղեցական երգեցողութեան ջղային բարձրակոչ նկատողութիւններով շարունակ ընդհատում էր ս. արարողութիւնը... Դժբաղդ հայ երաժիշտը մտաւոր մթութեան մէջ անգամ, գիտակցութեան վերջին ճիգը լարելով, ձգտում է շարունակ դէպի իր սիրած մուզիկան և կարծես ուզում է ասել, ամեն բանից պատրաստ եմ հրաժարվել և տալ աշխարհն, աղաչում եմ՝ թողէք ինձ միայն իմ սիրած, փայփայած գործը, որի համար ես զոհել եմ իմ կեանքը և երջանկութիւնը... և նա իր ներկայ հոգեկան ծանր վիճակում սիրում է ապրել անցեալի յիշատակներով, որոնք այս կամ այն առնչութիւնն ունեն իր մասնագիտութեան հետ, բայց որովհետև նրա դրութեան մէջ բարւոքումն չէ նկատվում, լուսաւոր ընդմիջումները (lucida intervalla) շատ կարճատև և պատահական են լինում, ուստի ամեն անգամ առաջին խօսքերից յետոյ՝ քիչ թէ շատ խիստով արտասանված, յաջորդում է անկապ և անխորհուրդ բարբաջանք։

Մեր տեսակցութիւնը երկար չը տևեց. տպաւորութիւնը ծանր էր և ես վեր կացայ տեղից, որ գնամ. Եկմալեան կամեցաւ ինձ ուղեկցել և մենք երեքով սանդուղքից իջանք բակը և անցանք փողոց. ամառնային շոգ օր էր և շուրջը կատարեալ ամայութիւն և լռութիւն էր տիրում. Եկմալեան իսկոյն մեզանից բաժանվեց և բաց գլխով սկսեց արագ քայլել փոշիոտ փողոցով, աջ ու ձախ բաշխելով լուռ պատերին ողջոյններ և ոմ գիտէ մինչև ո՞ր տեղ նա կը հասնէր, եթէ եղբայրը յետ չը կանչէր։ Մտածում էի ես, որ մի օր այստեղ ես պիտի պատահեմ Մակար Եկմալեանին այդ վիճակի մէջ. տեսարանը յուզիչ էր և ես շտապեցի հրաժեշտս տալ և հեռանալ։

Այդ այցելութեան խոր ազդեցութեան տակ իմ մէջ զարթեցին անցեալի քաղցր յուշիկները. ես յիշեցի Ներսիսեան դպրոցը և այն հաճեմատաբար երջանիկ օրերը, երբ Եկմալեան՝ 1879—1890 թուին, Պետերբուրգի կայսերական երաժշտական ճեմարանը մեծ աջողութեամբ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆԻ ՄՕՏ

Անցեալ շաբաթ ես տեղեկացայ, որ մեր յայտնի երաժիշտ Մակար Եկմալեան իր հայրենի Վաղարշապատից տեղափոխվել է Թիֆլիս օդափոխութեան համար։ Ահա երկու տարի է արդէն, որ նրա կեանքը հոգեկան ծանր տագնապի մէջ է ժաշվում և, ուստի, առանց ապաքինման որ և է նշոյլի։ Օդեսսա և Խարկով քաղաքները տարան հիւանդին յայտնի մասնագէտների մօտ բժշկելու, բայց այնտեղ անբուժելի գտան նրա ցաւը և Եկմալեան վերադարձաւ հայրենիք բուսական կեանքի համար... Երբեմն Վաղարշապատից նրա մասին մխիթարական լուրեր էին հասնում, որոնք յոյս էին տալիս մի օր տեսնել նրան որոշ չափով ապաքինված, բայց մեր վերջին տեսակցութիւնն այդ յոյսն ևս փարատեց. այժմ կասկած չը կայ, որ գիտակցութիւնը խսպառ թողել է դժբաղդ հայ երաժշտին...

Հալլաբար քաղաքամասի մի խուլ անկիւնում նա ապրում է այժմ իր եղբօր հետ։ Հարցնելով մենք գտանք նրա բնակարանը. պատշգամբի վրա կանգնած էր հիւանդի եղբայր Ադամ Եկմալեան. սովորական ողջոյնից և հարց ու փորձից յետոյ ես խնդրեցի ինձ ուղեկցել հիւանդի մօտ։ «Սպասեցէք, խնդրեմ, այս սենեակում, ես նրան ձեզ մօտ կը բերեմ» ասաց նա և անցաւ հարևան սենեակը. 10 բոպէ չանցաւ, բացվեց դուռը և շէմքի վրա երևաց Մակար Եկմալեան... նիհար, ծերունու նման կռացած, գլուխը խոր ընկած ուսերի մէջ, մաշված, արևախանձ դէմքով, պղտոր աչքերով...

Ես մօտեցայ նրան.

—Բարև, սիրելի Մակար, ճանաչում ես ինձ։

—Ի՞նչպէս չէ, ի՞նչպէս չէ (ինձ թվում է, որ նա ինձ չը ճանաչեց) և այդ խօսքերով նա մեկնեց ձեռքը աւ գիրկս ընկաւ. հազիւ զսպելով սրտիս յոյզը, ես նրան նստեցրի մօտս և մենք սկսեցինք զրուցել... բայց ի՞նչ զրոյց էր դա. իմ հարցերի պատասխանը խանգարված մտքի անկապ բանահիւսութիւններ էր, որից պարզապէս երևում էր, թէ որքան մեծ աւերումներ է արել անգութ ախտը հիւանդի բանականութեան մէջ։

Խօսակցութեան ժամանակ շատ անգամ նա յիշում է Գէորգ IV կաթողիկոսին, ի հարկէ, շփոթելով հայրապետութեան ժամանակը և գործերը. այստեղ հարկ ենք համարում նկատել, որ Եկմալեան բարեյիշատակ հայրապետի ամենասիրելի որդեգիրն էր և իր վեհափառ բարերարի արդեամբ է կատարելագործվել երաժշտութեան մէջ Պետերբուրգում. յիշեց նաև մի անգամ իր նախկին ուսուցիչ Թաշճեանին, յարակցելով, որ նրա հետ միասին է պրել անցեալի յիշատակներով, որոնք այս կամ այն առնչութիւնն ունեն իր մասնագիտութեան հետ, բայց որովհետև նրա դրութեան մէջ բարւոքումն չէ նկատվում, լուսաւոր ընդմիջումները (lucida intervalla) շատ կարճատև և պատահական են լինում, ուստի ամեն անգամ առաջին խօսքերից յետոյ՝ քիչ թէ շատ խիստով արտասանված, յաջորդում է անկապ և անխորհուրդ բարբաջանք։

Մեր տեսակցութիւնը երկար չը տևեց. տպաւորութիւնը ծանր էր և ես վեր կացայ տեղից, որ գնամ. Եկմալեան կամեցաւ ինձ ուղեկցել և մենք երեքով սանդուղքից իջանք բակը և անցանք փողոց. ամառնային շոգ օր էր և շուրջը կատարեալ ամայութիւն և լռութիւն էր տիրում. Եկմալեան իսկոյն մեզանից բաժանվեց և բաց գլխով սկսեց արագ քայլել փոշիոտ փողոցով, աջ ու ձախ բաշխելով լուռ պատերին ողջոյններ և ոմ գիտէ մինչև ո՞ր տեղ նա կը հասնէր, եթէ եղբայրը յետ չը կանչէր։ Մտածում էի ես, որ մի օր այստեղ ես պիտի պատահեմ Մակար Եկմալեանին այդ վիճակի մէջ. տեսարանը յուզիչ էր և ես շտապեցի հրաժեշտս տալ և հեռանալ։

Այդ այցելութեան խոր ազդեցութեան տակ իմ մէջ զարթեցին անցեալի քաղցր յուշիկները. ես յիշեցի Ներսիսեան դպրոցը և այն հաճեմատաբար երջանիկ օրերը, երբ Եկմալեան՝ 1879—1890 թուին, Պետերբուրգի կայսերական երաժշտական ճեմարանը մեծ աջողութեամբ

Երրորդ—պէտք է խուսափել վարակվածների հետ յարաբերութիւն ունենալուց կամ որևէ յարաբերութիւն ունենալուց անմիջապէս յետոյ պէտք է ենթարկել իրան ախտահանութեան։

Խոլերան տգէտների հիւանդութիւն է։ Ինտելիգէնտ մարդիկ վարակվում և մեռնում են միայն ու միայն անզգուշութիւնից։

Եթէ մի մարդ չէ խմում հում ջուր, չէ ուտում հում կանաչի, արմտիք ու մրգեր և խուսափում է վարակվածների հետ յարաբերութիւնից կամ իսկոյն ախտահանութեան ենթարկում իրան վարակվածի հետ որև է շփում ունենալուց անմիջապէս յետոյ՝—այդ մարդը երբէք չի վարակվի խոլերայով։

Բացի այդ բոլոր սանիտարական հարցերից, կայ և մի բարոյական խնդիր։ Չը պէտք է վախենալ. պէտք է սառնասիրտ լինել։ Վախեցողն առ հասարակ կորցնում է իր հաւասարակշռութիւնը, մոլորվում, շփոթվում և յաճախ զոհ գնում։

Ուրեմն, ընթերցող, այնքան էլ սարսափելի չէ այդ հրէշը։ Նա մի գազան է, որի ատամները սառնարիւն և զգուշաւոր մարդուն չեն կարողանում ծակել։

Պէտք է խստութեամբ կատարել սանիտարական բոլոր պահանջները և հանգիստ ու ապահով վայելել կեանքի բարիքը։

Մաքրութիւն և զգուշութիւն, իսկ խոլերան այդ դէպքում մի անատամ գայլ կը դառնայ։

Խ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Յուլիսի 27-ին

Այսօր 26-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, բժիշկ Ն. Տէր-Իսահակեանը քաղաքային խորհրդի դահլիճում կարդաց իր առաջին դասախօսութիւնը խոլերայի մասին։

Խոլերան, հաւաճարակներից այդ սարսափելին, որ ամեն անգամ հազարաւոր մարդկային զոհեր է տանում իր հետ, գալիս է մեզ մօտ Հնդկաստանից Պարսկաստանի միջոցով, որ հաւաճարակների նախադուռն է առհասարակ։ Հնդկաստանի Գանգէս գետը իր հովիտով կազմում է խոլերայի գլխաւոր ծննդավայրը, որտեղից ոչ այնքան մուսօնները, որքան առևտուրն ու արդիւնաբերութիւնը տարածում են նրան աշխարհի այլ և այլ կողմերը։

Խոլերան առաջ է գալիս մի առանձին բացիլից, որ իր գտնողի անունով կոչվում է կօխի ստորակէտ, որովհետև ստորակէտի կամ կիսաղեղի ձև ունի, և որի գոյութեան ամենաէական հետևանքներն են՝—արտաթորութիւն, փխանք և ջղային ցնցումներ (ջղաձգութիւն)։ Այդ բացիլ—միկրօբը ընկնելով որ և է տեղ (ստամոքսի, ջրի և այլ իրերի մէջ) սկսում է չափազանց արագ կերպով աճել, այնպէս որ մի միկրօբը 1/2 րօպէի մէջ տալիս է մի քանի տասնեակ միկրօբներ, իսկ մի օրվայ մէջ—միլլիարդներ։ Միկրօբը աւելի արագ է աճում ջրի մէջ, որովհետև նա ընդհանրապէս խոնաւութիւն է սիրում, դրա համար էլ ջրաշատ տեղերում, գետերի հովիտներում խոլերան աւելի սարսափներ է գործում, քան անջրդի վայրերում կամ բարձրաւանդակներում։ Ուրեմն, խոլերայի ժամանակ գլխաւոր նախազգուշացուցիչ միջոցներից մէկը պէտք է լինի այն, որ մարդ խոյս տայ ջրից և խոնաւութիւնից, բայց ցաւօք սրտի պէտք է ասել, որ մեր քաղաքը այդ կողմից շատ էլ նախանձելի պայմաններ չէ ներկայացնում, որովհետև այստեղ շատ կան խոնաւ, ցածլիկ և մութ բնակարաններ, որոնք աւելի նպաստող են խոլերայի տարածվելուն։

Այդպիսի բնակարանների տէրերին նորերս կազմված սանիտարական յանձնաժողովը, որ պէտք է հսկէ քաղաքի առողջապահական դրութեան վրա, առաջարկել է փոխադրվել քաղաքի մի այլ մասում, որտեղ քաղաքային վարչութիւնը 50 սաժէն հող է յատկացնում իւրաքանչիւրի համար։ Բայց այդ առաջարկութիւնները մեծ մասամբ մնում են անիրագործելի բնակարանատէրերի նիւթական միջոցներ չունենալու պատճառով։

Խոլերային դիմադրելու համար հարկաւոր են մի շարք միջոցներ ձեռք առնել, որոնց իրագործելը պահանջում է այնպիսի մեծաքանակ ծախսեր, որ մեր քաղաքի ոյժերից վեր է, ուստի պէտք է բաւականանալ միայն ամենաէականով այն է—հետևել ուշի ուշով քաղաքի մաքրապահութեանը, աղտահանութեանը (ассенизація), բաց անել ձրի թէյարաններ և ճաշարաններ չունևոր դասակարգին լաւ սնունդ մատակարարելու համար, որովհետև նուազ ստամոքսը շուտ է ենթարկվում հիւանդութիւնների ազդեցութեանը, գործ ածել մեծ մասամբ թթու և թթուաշ բաներ, որոնք ոչնչացնում են բացիլներին, խոյս տալ մրգերից, հաբբեցողութիւնից, լողանալուց, որովհետև ջրի մէջ բացիլները անհամեմատ շատ են, և երբէք չը վախենալ ու կորցնել հոգեկան հաւասարակշռութիւնը, որից մասամբ կարող է խանգարվել մարմնի ֆիզիօլոգիական նորմալ ընթացքը և այլն և այլն։ Սենեակների ախտահանութիւնը նոյնպէս դիմադրութեան ամենաուժեղ միջոցներից մէկն է։

Դասախօսութեան վերջում պ. բժիշկը ցոյց տուեց ախտահանիչ մեքենան և խոշորացոյցը, որով միկրօբները մեծանում են մինչև 1500 անգամ, որից յետոյ ժողովուրդը բուռն շնորհակալութիւններով հեռացաւ։ Ցանկալի է, որ պ. բժիշկը շարունակէ իր հետաքրքիր դասախօսութիւնները, որին կարօտ է մեր ժողովուրդը։

Թղթակից

ՆԱՄԱԿ ՕԴԷՍԱՅԻՑ

Յուլիսի 21-ին

Օդեսայի հայոց ծխական դպրոցի մասին շատ անգամ ենք առիթ ունեցել խօսելու «Մշակի» էջերում։ Դա իրաւամբ մի չարքաշ հիմնարկութիւն է, որի մասին անկարելի է լռել, անկարելի է նրան մոռացութեան մատնել, որովհետև նա է միակ միջոցը մայրենի լեզու տարածելու այս օտարախօս հայաստանի մէջ։ Բայց ինչ արած, նրա շուրջը պատվում են անձնաւորութիւններ, որոնք հնարաւորութիւն չեն տալիս նրան կանոնաւոր կերպով ծառայելու իր նպատակին։

Նախկին նամակներից մէկում ասել էինք, թէ հայոց լեզուի ուսուցիչները չեն կարողանում մնալ։ Ծխական քահանայի հետ, որ դպրոցի տէրն ու կառավարիչն է, ոչ ոք չէ կարողանում ծառայել։ Նրանցից ոմանք, չը կարողանալով տանել կառավարչի արարմունքները՝ ստիպված են եղել թողնել դպրոցը նոյն իսկ ուսումնական տարվայ ընթացքում։ Անցեալ տարի վերջապէս երէցփոխի ջանքերով հրաւիրվում է ճեմարանաւարտ մի փորձված և հմուտ ուսուցիչ, հմուտ ենք ասում, որովհետև նա լինելով Ակքերմանցի՝ հետևապէս ծանօթ լինելով տեղական պայմաններին, աւելի լաւ՝ քան մի ուրիշը, կաւանդէր հայոց լեզուն։ Այս տարի պատահաբար ներկայ լինելով քննութիւններին՝ աւելի քան համոզվեցինք այդ բանի մէջ։ Այն աշակերտները, որոնց հետ նա պարապել է ա. բաժանմունքում, ցոյց տուին կանոնաւոր գիտութիւն, որից պարզ երևում է նոր ուսուցչի բարեխղճութիւնը։

Թէ ինչ իրաւունքով, ինչ ցէնզով անցեալ տարի մեր կրօնուսոյց կառավարիչը պարապում էր և հայոց լեզու, այդ մեզ համար գաղտնիք է։ Այսքանը գիտենք, որ նրա ձեռքից տարվայ կիսում ուսուցիչը փախաւ և նա ստանձնեց և նրա դասերը։

Մի նմուշ հայր կառավարչի բարեխղճութիւնից. հայոց լեզուի քննութեան ժամանակ, ինչպէս այդ ընդունված է ամեն տեղ՝ ուսուցիչը առաջարկում է տարվայ ընթացքում անցածի ցուցակը. ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով այդ ցուցակի վրա, հայր կառավարիչը հարցնում է աշակերտներին այն, ինչ որ նրանք չեն անցել և այս ամենը դիտմամբ...

Միայն հայոց լեզուն չէ այդ դրութեան մէջ դպրոցում. կրօնի դասաւանդման մասին աւելորդ եմ համարում խօսել անգամ։

Այս տարի ևս հայր կառավարիչը արդէն հեռացրեց անցեալ տարվայ ուսուցչին, որովհետև... նա չը հաճաձայնվեց ամառը մնալ Օդէսայում և եկեղեցում տիրացուի պաշտօն կատարել։ Ասել է թէ դժբաղդ դպրոցը երբէք կանոնաւոր գիտութեամբ ուսուցիչ չէ ունենալու հայոց լեզուի համար։ Թշուառ է հայ ուսուցիչը. եթէ նրան գնահատողը լինելու է մեր ծխական քահանան...

Ասում են՝ այնպիսի ուսուցիչ է որոնում հայր կառավարիչը, որ լինի միաժամանակ և ուսուցիչ հայոց լեզուի, և գեղագրութեան, և երգեցողութեան, և խմբապետ, և տիրացու եկեղեցում՝ տնօրինէք և գերեզմանատուն պըտտվելու համար տէր հօր հետ... Սարսափելի է այս ամենը, անտանելի են այս անկարգութիւնները. բայց ով է ուշադրութիւն դարձնողը. դպրոցը կաշկանդող չար ձեռքերից ազատող չը կայ, որպէս զի մանուկները հնարաւորութիւն ունենան տարրական գրագիտութիւն ձեռք բերելու։

Դպրոցը մինչև այժմ նիւթապէս ահահովված էր, այժմ, ինչպէս լսում ենք, դժուարանում է և նրա նիւթականի հարցը. բայց չէ՞ որ այստեղ գործում է աղքատաց հոգաբարձութիւն. միթէ՞ նա լուռ հանդիսատես կը լինի դպրոցի փակման. չէ՞ որ նա ունի 7000 ր.—8000 ր. ազատ դրամ և նրա կանոնադրութիւնը նրան չէ արգելում ապահովել դպրոցը. այդ մասին սակայն հետևեալ անգամ։

Աբ. Թոն.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսական Կարմիր Խաչի Կովկասեան բաժնի վարչութիւնը մեզ խնդրում է տպագրել, որ մինչև ներկայ յուլիսի 22-ը իր ընդհանուր մուտքը եղել է 81,558 ր. 60 կ., 600 ր. ընտայով։ Այդ գումարի մէջ մտնում են Կարմիր խաչի, պատերազմական կարիքների, որբերի և այրիների և նաւատօրմի օգտին եղած բոլոր նուիրատուութիւնները։

—

Անդրկովկասի երկաթուղիների գլխաւոր Ի. Կ. Իվանովսկին սանիտարական յանձնաժողովի կողմից հեռագրով կարգադրութիւն ուղարկեց Բաքուի և Երևանի ենթակօմիսսիաներին, որ շտապեն շինել մեծ կաթսաներ բոլոր կայարաններում եփած և սառեցրած ջրի համար, որոնք կարողանան բաւականութիւն տալ բոլոր տեսակի ուղևորների ջրի պահանջին։ Կայարանների գլխաւորները պէտք է խիստ հսկեն ջրի բոլոր տեսակի ամանների մաքրութեան վրա։ Կաթսաների կափարիչները պէտք է կողպած լինեն և ներքևում ծորակներ ունենան։ Բոլոր ջրամանների վրա պէտք է գրված լինի «եփած ջուր» բառերը, իսկ հում ջրի բոլոր անցքերը պէտք է ծածկել ճանապարհորդների այցելած սենեակներում։ Այդ գործին վերաբերեալ բոլոր ծախսերը՝ ամանների, նրանց կարգի բերելու և սառոյց գնելու համար՝ պէտք է կատարվի առանձին կրէդիտի հաշուով։

—

«Առևտրական գործակալութիւնը» շատ հանգստացուցիչ լուրեր է հաղորդում խոլերայի մասին Պարսկաստանից։ Յուլիսի սկզբներին հիւանդութիւնը Թէհրանում շատ զօրեղ էր՝ նոյն իսկ օրական 1000 հոգուց աւելի, իսկ այժմ (յուլիսի 13) 30—50 հոգի և մահվան դէպքերն էլ հազագիւտ են։ Կարանտինների շնորհով խոլերայի տարածվելը երկրի միւս մասերում՝ նուազեց։ Թէհրանում, Մէնջիլում, Բուղբարում և Էնզէլիում խոլերան այժմ սկսել է նուազել։ Քաղաքներից հեռացած և առևտուրները մի առ ժամանակ դադարեցրած վաճառականներն այժմ վերադարձել են և վերսկսել իրանց գործերը։ Ամեն տեղ կատարեալ հանդարտութիւն է և եղանակն էլ փոխվել է—առաջվայ նման շոր չէ, երբեմն նոյն իսկ զով է. տեղ-տեղ սկսել են անձրևներ։

—

Կայսերական Պալատի մինիստրութեան անունով յուլիսի 22-ին տրված Բարձրագոյն ուկազով իշխանուհի Աննա Արղութեան-Երկայնաբազուկին շնորհված է Նոցա Մեծութեան Թագուհի կայսրուհիների Ֆրէյլինութեան տիտղոս։ Նոյն օրը՝ նոյն մինիստրութեան ա-

---

աւարտելուց յետոյ ընդունեց ազգային դպրոցում երգեցողութեան և ձայնագրութեան ուսուցչի պաշտօնը, որով սկիզբն դրեց կանոնաւոր հայ եկեղեցական երաժշտութեան. ով չէ յիշում, ինչ ողբալի վիճակի մէջ էր գտնվում առաջ մեր եկեղեցական երգեցողութիւնը. անները դաշնակ, տաղտկալի մի վակերպ՝ նա թմրեցնում էր լսողի միտքը, իսկ քիչ թէ շատ երաժշտական ճաշակ ունեցողին հեռացնում էր եկեղեցուց. մենք միշտ կարմրելով տեսնում էինք, ինչպէս հայ եկեղեցական արարողութեամբ հետաքրքրվող օտարականը հեսաթափված թողնում էր տաճարը, ինչպէս եկեղեցին ատիճանաբար դատապարտվում էր ամայութեան։

Բայց ահա եկաւ Եկմալեան և Ներսիսեան դպրոցի աշակերտներից նրա կազմած երգեցիկ խումբը առաջին անգամից մեծ շարժում և հետաքրքրութիւն գրգռեց ժողովրդի մէջ. Թիֆլիսի մայր տաճարի կամարների տակ վերջապէս հնչվեց ներդաշնակ, քաղցրահնչիւն երգեցողութիւն. Ներսիսեան դպրոցի տարեկան հանդէսների ժամանակ ազգային և հոգևոր երգերը Եկմալեանի ղեկավարութեամբ կազմում էին ծրագրի ամենահետաքրքիր մասը, որը ամեն անգամ մեծ հաճութեամբ լսում էր ժողովուրդը։ Այն ժամանակ անսովոր տեսարան էր ներկայացնում եկեղեցին աղօթողների խուռն բազմութեամբ և ես մինչև այժմ չեմ կարող մոռանալ այն խոր, սքանչելի տրպաւորութիւնը, որ ինձ և հանդիսականների վրա թողեց Եկմալեանի ձայնագրած սուրբ աբարողութեան մի քանի նշանաւոր կտորները. ինչ սրտառուչ էր նրա քառաձայն «Տէր ողորմեան», այդ մելամաղձոտ, թախծալի մեղեդին, որ ապերջանիկ հայ ազգի ողբը և աղօթքն է պարունակում իր մէջ, որպիսի հոգեբուղխ հնչիւններ էր արտադրում «Արի Աստուած հարցն մերոց»-ը, որ հանդիսաւոր լռութեան մէջ յուզված սրտով լսում էր աղօթող ժողովուրդը. այդ խորհրդաւոր րօպէին իւրաքանչիւր հայի յուզմունքը հասնելով գերագոյն աստիճանին, ցոլացնում էր զգայունների աչքին արտասուքը և աղօթքի խոր թախիծը. այդպէս էր Եկմալեանի «Տէր-ողորմեան», այդպէս էր նրա «Հայր սուրբը», Տէրունական աղօթքը և այլն։ Ես յիշում եմ, ինչպէս Եկմալեան, միշտ մտախոհ, արձանացած իր տեղում, անշարժ հետևում էր ժողովրդի միջից իր կրթած և վարժած խմբի երգեցողութեան, այն խմբի, որ ճանաչելով իր խստապահանջ ղեկավարի ընոյթը, միշտ ջերմ եռանդով և ոգևորութեամբ էր կատարում իր պարտքը։

Այժմ Եկմալեանի հեռանալով իր սիրած ասպարէզից ընկաւ եկեղեցական երաժշտութիւնը. ժամանակի և կեանքի յեղյեղուկ ընթացքը արդէն պատմութեան յանձնեց անցեալի այդ գեղեցիկ հոգեշահ յիշատակները։ Ճշմարիտ է, թէպէտ նրա աշակերտները՝ դէս ու դէն ցրված՝ շարունակում են իրանց բազմերախտ ուսուցչի գործը, սակայն զուրկ լինելով երաժշտական գիտութիւնից, նրանք անզօր են անվրէպ առաջ տանել ծանր և պատասխանատու պաշտօնը։ Այստեղ ցաւելով պիտի նկատենք, որ Եկմալեան, չը նայելով իր բուռն ցանկութեան, չը կարողացաւ իր գործունէութեան ընթացքում ստեղծել շկոլա, որը միայն կարող էր պատրաստել և հարթել ճանապարհը նրա յաջորդների համար. գրեթէ նոյն վիճակի մէջ մեռաւ և մեր յայտնի խմբապետ Կարաուրզան, որի մահվանից յետոյ, եթէ հաշուի չառնենք նրա եղբօր մի-երկու յաջող դեբիւտը խմբապետութեան պաշտօնի մէջ, լռեց հայ ժողովրդական երգը գաւառում. և ինչ ողբալի զուգադիպութիւն. հայ երաժշտութեան այդ երկու ժամանակակից սիւները միաժամանակ և անակնկալ թողին այն ասպարէզը, որի վրա մէկի անսպառ եռանդը և ոգևորութիւնը, իսկ միւսի հիմնաւոր գիտական պատրաստութիւնը դեռ այնքան բան ունէին կատարելու։

1902 թ, մարտ ամսին յանկարծամահ եղաւ Կարա-Մուրզան 48 տարեկան հասակում, իսկ երկու ամսից յետոյ նոյն հասակում մշտապէս դժբաղդացաւ նրա զինակից Մակար Եկմալեան. երկուսի միանուագ կորուստը այնչափ անսպասելի էր և եղերական, որ դեռ երկար ժամանակ հայերիս համար պիտի զգալի լինի հայ երաժշտութեան շուրջը տիրած զարհուրելի ամայութիւնը և լռութիւնը։ Կարա-Մուրզայի մտերիմները արդէն հրատարակեցին տեղական ռուս երաժիշտ Կնինայի աշխատակցութեամբ հանգուցեալի անտիպ աշխատութիւնը—լաւագոյն և նպատակայարմար միջոց յաւերժացնելու իւրաքանչիւր գրական գործիչի յիշատակը և երախտիքը—իսկ Եկմալեանի ձեռագիրները, որոնց մէջ ով գիտէ ազգային երաժշտութեան ինչպիսի գոհարներ կան թաղված, տակաւին մնում են անտիպ՝ թաքված մի արկղի մէջ և թերևս երկար ժամանակ կանցնի առաջ քան նրանք արժանանան լոյս աշխարհ տեսնելու։ Եկմալեանի առողջ եղած ժամանակ մենք քանի անգամ առիթ ենք ունեցել նրանից լսելու, որ նա աշխատում է ժողովրդական երգերի մշակութեան վրա։

Մեր վերջին տեսակցութեան ժամանակ շօշափելով այդ խնդիրը երաժշտի եղբօր ներկայութեամբ, որի մօտ գտնվում են Եկմալեանի իրերի հետ և նրա բոլոր գրուածքները, առանձնապէս շեշտել ենք, թէ ինչպիսի գանձի պահապան է նա կարգված ճակատագրի անքննելի կամքով—մենք յորդորեցինք ամենայն ակնածութեամբ և անվթար պահպանել այդ եզակի ժառանգութիւնը, որ մնացել է Եկմալեանի անցեալից, մինչև ձեռնհաս անձանց միջոցով կարելի լինի նրա բոլոր ձեռագիր աշխատութիւնները քննել և հրատարակել. հայ երաժշտութեան պատմութեան մէջ Եկմալեանի անունը անշուշտ իր արժանաւոր տեղը կը բռնի, և մենք կարծում ենք, որ ժամանակակից սերնդի սրբազան պարտքն է անկորուստ պահպանել և յանձնել պատմութեան այն, ինչ որ կարող է կազմել շնորհալի հայ երաժշտի փառքն ու պարծանքը։

Յ. Սպենդիարեան

նունով տրված երկրորդ Բարձրագոյն Ուկազով Նորին Կայսերական Մեծութեան Սեփական կանցելարիայի Կայսրուհի Մարիայի հաստատութիւնների մասում ծառայող կօլլ. սով. Կոնստանտին Ակիմովին շնորհվում է Նորին Կայսերական Մեծութեան Դրան կամերհիերի կոչում։

—

«Прав. Вѣст.»-ում խօլերայի ընթացքի մասին հետևեալ տեղեկութիւններն են տպված. I Պարսկաստանում։—Քիրմանշահում մայիսի երկրորդ կէսում մեռել են 100-ից աւելի մարդ, յունիսի առաջին կէսին՝ 30, իսկ երկրորդ կէսին՝ միայն 4 մարդ։ Մայիսին խօլերան երևաց Սունգարում, Գասրը-Շիրինում, Ղումում, Սահնէում, Մէլաիրի շրջանում, Խանքինում և Համադանում։ Համադանում յունիսին մեռաւ 300-ից աւելի մարդ։ Յունիսի 12-ին խօլերան երևաց Թէհրանում, ուր յունիսի վերջերին օրական 800-ից աւելի մարդ էր մեռնում։ Յունիսի վերջերին նա երևաց Ղազվինում։ II Ասիական Թիւրքիայում։ Բասրա քաղաքում մինչև մայիսի կէսը մեռել է խօլերայից 161 մարդ։ Բաղդադում մայիսի 22-ից մինչև յունիսի կէսը եղել է 16 դէպք։ Խօլերան երևացել է Նէջէֆում, Ղազիմէինում և Հիլլէում։ III Հնդկաստանում։ Կալկաթայում մարտի երկրորդ կէսից մինչև մայիսի վերջը մեռել է 910 մարդ, Մադրասի շրջանում ապրիլին՝ 495 հոգի։

—

Մենք ստացանք «Բանաստեղծութիւններ» վերնագրով ոտանաւորների մի փոքրիկ ժողովածու, հեղինակութիւն Սիմ. Բաբիևանի և հրատարակութիւն Յ. Դաւթեանի։ Տպված է Պետերբուրգում. գինն է 20 կոպէկ։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Կիրակի, յուլիսի 25-ին, դերասան Ամս-Խարազեան և դերասանուհի տիկին Զաբելը, տեղիս հայ թատերասէրների մասնակցութեամբ տուեցին Էրէսթավի թատրոնում «Ոճրագործի ընտանիք» ողբերգութիւնը։ Ներկայացումը անցաւ աջող. դահլիճը լիքն էր. հասարակութեան ոգևորութեանը և ծափահարութիւններին վերջ չը կար։ Պ. Խարազեանը և տիկ. Զաբելը ստացան նաև ընծաներ»։

—

ԱՐԴԻՆԱՅԻՑ մեզ գրում են. «Հացի քաղը սկսվել է գիւղերում. բերքը այս տարի միջակ կարելի է համարել. երբեմն սաստիկ շոգ է լինում, հասնելով ըստ Բէօմիւրի 30—34 աստիճանի»։

—

ՋԱՋՈՒՐԻՑ մեզ գրում են. «Այս մի ամիս է, որ այստեղ են մի խումբ երկրաչափներ, ուղարկված բարձր իշխանութիւնից։ Դրանց նպատակն է շրջակայ գիւղերի հողերը նորից չափել և զանազան վէճերին վերջ տալ։ Բացի դրանից, որոշել այն գիւղերը, որոնք կարօտութիւն ունեն հողի։ Գիւղացիք ամեն օր խմբերով նրանց են դիմում և խնդրում են իրանց հողերը շատացնել։ Նրանք մեծ յոյսեր են տալիս։ Պէտք է ասած, որ շրջակայ գիւղերի մէջ ամենաքիչ հող ունեցողը Ջաջուռն է։ Նրանք երբ այդ գիւղում հաստատվեցին, թւով 50 տուն էին, իսկ այժմ դառել են 200 տուն, բնականաբար այդ հողերը նրանց չեն բաւականանում։ Եւ այդ է պատճառը, որ այս քանի տարում այդ գիւղացիների մէջ միշտ անհամաձայնութիւններ են լինում։»

—

ԿՈՒՍԱՊԱՏ գիւղից (Զիւանշիրի գաւառ) մեզ գրում են, «Բագու-Բալախանի ծառայող մեր գիւղացի երիտասարդների մէջ միտք է ծագել Կուսապատ գիւղում Գիւղատնտեսական եւ առեւտրական մի ակցիօներական ընկերութիւն հիմնել և նոր ու կատարելավորված մեքենաներով գործին հմուտ մարդկանց առաջնորդութեամբ աւ այժմ երկրագործութեամբ պարապել, իսկ հետզհետէ գիւղատնտեսական և միւս ճիւղերին ձեռնարկել։ Ընկերութեան հիմնադիրները մտադիր են ընկերութեան բաժնեգիրը այնքան նշանակել, որ գիւղացիներից իւրաքանչիւրը ևս կարողանայ մասնակցել և միջոց ունենայ մօտիկուց ծանօթանալ ինչպէս կատարելագործված նոր մեքենաների, այնպէս էլ գործին վերաբերեալ նոր և օգտաւէտ տեղեկութիւնների հետ։ Ցանկալի է, որ մեր Մեծշէն, Գիւլիաթաղ, Մոխրաթաղ և Մաղաւուզ գիւղերի ինչպէս Բագու-Բալախանի, այնպէս էլ միւս քաղաքներում ժամանակաւոր ապրող երիտասարդներն ևս, որոնց համար գուցէ դժուար լինի առանձին առանձին ընկերութիւններ հիմնել, միանային յիշեալ երիտասարդների հետ և կազմէին այդ վաղուց ցանկալի ընկերութիւնը, որով գուցէ և օրինակ տային ռամիկ գիւղացիներին ևս հետեւելու իրանց օրինակին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Գենեռալ Կուրոպատկինի հոգատարութիւնը։ «Рус. Инв.» թերթը գրում է. «Զօրքի մունդը, խմելիքը և սանիտարական վիճակը—ընդհանուր հրամանատարի գլխաւոր հոգսն են կազմում։ Նա, որ տեսել է տիֆը Թիւրքական պատերազմում, գիտէր, որ զօրքի համար սարսափելի են ոչ թէ թշնամու գնդակները և ռումբերը, այլ հիւանդութիւնները, և ահա ինչու Ռուսաստանից շուտով զօրք բերել տալու հոգսով մտազբաղ, նա, այնու ամենայնիւ, հերթից դուրս բաց էր թողնում սանիտարական գնացքներ և դեղօրայքի ու վիրակապերի բեռներ։ Ամեն բան անվում էր, որ հայ և միս իր ժամանակին և առատաբար ունենայ զօրքը, և եթէ երբեմն զօրքը սոված էր մնում, մեղաւոր էին կամ առանձին մասերի պետերը կամ տարերական պայմանները։ Գլխաւոր հրամանատարը երբէք չէր բարձրացնում ձայնը, երբէք չէր բարկանում, բայց նա սաստիկ յուզվում էր, երբ լսում էր, որ զինուորները մնացել են առանց ճաշի։ Դա ամենածանր վարմունքն էր. այդտեղ նա անխնայ էր. յանցաւորին սպասում էր կամ յանդիմանութիւն զօրքի հրամանագրի միջոցով կամ պաշտօնից հրաժարեցումն, եթէ նա իրանից կախված բոլոր միջոցները ձեռք չէր առել մնունդ ձեռք բերելու համար։»

Նապօլեանցիների դատողութիւնները։ «Русь» լրագիրը քաղուածներ է առաջ բերում եապօնական լրագիրներից, պատերազմական գործողութիւններին վերաբերեալ։

«Բալտիական էսկադրայի Հեռաւոր Արևելք ուղարկելու լուրը, յուլիսի սկզբներին մեզ շատ յուզեց (գրում է «Մանչաս»)։ Եթէ Ռուսաստանը իսկապէս մտածում է ուղարկել Արևելք բալտիական էսկադրան, նա պէտք է այդ անի անմիջապէս։ Յետոյ նա յարմար առիթ չի ունենայ։ Թէև Պօրտ-Արթուրը—Ռուսաստանի գլխաւոր ծովային յենակէտը—շնորհիւ մեր զօրքի և նաւատօրմի եռանդուն գործողութիւնների, այժմ գտնվում է բոլորովին անել դրութեան մէջ (չէ որ, իսկապէս խօսելով, Արթուրը գրեթէ մենք վերցրել ենք), այնու ամենայնիւ նրա էսկադրան դեռ այնքան զօրեղ է, որ շարունակում է գրաւել դէպ իրան մեր գլխաւոր ծովային զօրութիւնները։ Մենք հնարաւորութիւն չունենք դիմել Վլադիվոստոկի էսկադրային, ուստի ստիպված ենք թողնել նրան հանգիստ։ Ահա ինչու Ռուսաստանի համար իսկ և իսկ ժամանակն է ուղարկել բալտիական նաւատորմը։ Հարկ չը կայ ասել, որ նա կը հանի մեզ մօտ բաւական թուլացած. ճանապարհին նա կը հանդիպէ բազմաթիւ դժուարութիւնների, բայց այնու ամենայնիւ նա կարող է արդեօք հանդիսանալ մեր ապագայ գործողութիւններին։ Մենք գիտենք, որ մեր զինուորական իշխանութիւնները արդէն պատրաստվել են արժանաւոր կերպով դիմաւորել նրան։ Բայց արդեօք այդ նոր ծրագիրը չի ստիպի արագացնել գործողութիւնները Պօրտ-Արթուրում։

«Շատ բարդութիւններ է սպառնում մեզ բալտիական էսկադրան, եթէ նա դուրս գայ յունիսի սկզբին։ Բայց եթէ նա դուրս գայ յունիսի վերջին, կամ նոյն իսկ յուլիսի սկզբին—մենք պէտք է ուրախանանք։ Էսկադրան այդ դէպքում չէ կարող հանել արևելեան ջրերին և սեպտեմբերի կէսին։ Ինչ ասել կուզէ, թէ որքան ձեռնտու է մեզ այդ ձգձգումը։ Այդ ժամանակ, չորս ամսվայ ընթացքում, մեզ կաջողվի շատ բան անել, եթէ ոչ ամեն բան։

«Գուցէ բալտիական էսկադրայի դուրս գալու լուրը միայն լուր է, որ տարածել են մեզ վախեցնելու համար։ Ահ, սպառնալիք, սպառնալիք... Թող Ռուսաստանը ցոյց տայ մեզ Եապօնիայի պատմութիւնից, թէ գիտէ՞ արդեօք Եապօնիան ինչ է վախը և վախեցել է նա երբևիցէ սպառնալիքից»։

Ձակատամարտը տեղի կունենայ Լեաօեանի մօտ։ Բերլինից հաղորդում են, որ եապօնական բոլոր ոյժերը համարում են 220 հազար մարդ։ Ենթադրում են, որ գեներալ Կուրօպատկինը ամրացնում է Լեաօեանը։ Իսկ Տօկիօից հեռագրում են «Standard» լրագրին, թէ այդտեղի զինուորական շրջաններում այն կարծիքն է տիրապետում, որ ռուսաց բանակի նահանջումը Խայչէնից ցոյց է տալիս գեներալ Կուրօպատկինի վճիռը՝ ընդունել վճռական ճակատամարտ Լեաօեանի մօտ։ Պէկինից ստացված հեռագրական տեղեկութիւններին նայելով, չինական կառավարութիւնը նախազգուշութեան ամեն միջոց ձեռք է առնում այն դէպքի համար, եթէ ռուսաց զօրքերը անցնեն գործելու չէզօք հողի վրա։ Իւանշիկայը հեռագրել է չինական գեներալներին սահմանագլխի վրա, որ նրանք պէտք է ամեն հնարք գործադրեն համոզելու ռուսներին՝ չը դիմել բռնութիւնների և պահպանել չէզօք պետութեան իրաւունքները։

Զանազան տեղեկութիւններ։ Լօնդօնից հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին. «Զանազան լրագիրների մասնաւոր հեռագիրները հաստատում են, որ Պօրտ-Արթուրի շուրջը չաջողվեց և եապօնացիները 20,000 մարդից պակաս չը կորցրին։ «Daily Tel.» լրագրի թղթակիցը հաստատում է, որ ռուսների կորուստը ընդամենը 1,500 մարդ է։ Տօկիօից հեռագրում են «Daily Chron.» լրագրին, որ «Կասուգա» կրեյսերի վրա, որը ջրասոյզ է եղել, եապօնացիները սոսկալի կորուստ կրեցին։ Սէուլում, ինչպէս հեռագրում են յուլիսի 22-ից, յայտարարված է պատերազմական դրութիւն, տեղական պահակազօրքը ուժեղացրված է, որովհետև եապօնացիները երկիւղ են կրում, որ ընդհանուր ժողովրդական ապստամբութիւն կը ծագէ։»

Պատերազմական բեմի գործողութիւնների բրնաորոշումն։ «Berl. Tageb.» լրագիրը պատերազմական թղթակիցը իր վերջին նամակում Ինկօուից հետևեալ կերպով է բնաորոշում ռազմագիտական դրութիւնը պատերազմական գործողութիւնների բեմի վրա։

«Ես դեռ առաջ այն միտքը յայտնեցի, գրում է նա, որ ընդհանուր առմամբ դրութիւնը նպաստաւոր է ռուսներին և ոչ եապօնացիներին, չը նայելով վերջինների նախորդ աջողութիւններին։ Մէկ ու կէս կամ երկու ամսից յետոյ ռուսաց ոյժերը Մանջուրիայում այնքան մեծ կը լինեն, որ հնարաւորութիւն կը լինի գրաւել Կօրէան եապօնական այն զօրքի եաւից, որ կանգնած է Ֆին-Խուան-Զէնի մօտ։ Ճանապարհների յատկութեամբ բոլորովին հնարաւոր է մտնել Կօրէա հիւսիսից։ Ես այն կարծիքի եմ, որ Եւրոպայում և նոյն իսկ Ռուսաստանում եապօնացիների զօրքերի վիճակը աւելի նպաստաւոր են համարում նրանց համար, քան կարելի էր համարել, նայելով իրականութեան։ Եապօնական յաղթութիւններից գործերի դրութեան վրա ազդեցութիւն է ունեցել միայն մէկը, այն է Վաֆանգօուինը, բայց այդ յաղթութիւնից նրանք չը կարողացան օգտվել։ Որքան ես կարող եմ դատել, Կուրօպատկինը ներկայումս ունի հինգ սիբիրական հրացանաձիգ դիվիզիա, սիբիրական 4-րդ զօրամարմինը, 10-րդ արմէական կօրպուսը, 17-րդ արմէական կօրպուսի մի բրիգադա և հեծելազօրքի զանազան առանձին մասեր։ Նա մօտաւորապէս 120—130 էսկադրօն ունի և մօտ 400 դաշտային թնդանօթներ։ Բացի գլխաւոր ոյժերից հիւսիս-արևելեան Մանջուրիայում գտնվում են էլի ռուսական զօրքեր, որոնց թիւը ինձ ճիշդ յայտնի չէ. նրանք գտնվում են գեներալ Լինեվիչի հրամանատարութեան ներքոյ, որի անունը 1900 թուից ի վեր մեծ ժողովրդականութիւն է վայելում ռուսաց զօրքերի մէջ։ Ասում են, որ այդ ոյժերը կաւելացացնվեն և Պետերբուրգից կը գան նոր զօրաբաժիններ։ Նրանց գալուց յետոյ Կուրօպատկինը կունենայ 180—190 հազար մարդ։ Իսկ երբ մնացած երեք զօրաբաժիններն ևս կը գան, նրա զօրքերի թիւը կը հասնէ 300 հազարի. եթէ դրա վրա աւելացնենք պահակազօրքերը, երկաթուղային պահակախմբերը, Լինեվիչի զօրքերը, այն ժամանակ գեներալ Կուրօպատկինը կունենայ սեպտեմբերի սկզբին 450—500,000 զօրք։ Օգոստոսի երկրորդ կիսում, կը սկսվի արշաւանքը ռուսների կողմից։ Կուրօպատկինը յարձակողական դիրք կընդունէ, երբ վստահ կը լինի աջողութեան մասին։ Նա անսահման վստահութիւն է վայելում զօրքի մէջ։ (Бирж. Вѣд.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փոխարքայի հեռագիրը Նորին Մեծութեան յուլիսի 25-ից. «Գեներալ-լէյտենանտ Ստէսսել զեկուցանում է. 1) յուլիսի 14-ին. «Այսօր, առաւօտեան հինգ ժամից սկսած թշնամին, հանդէս բերելով մի զօրեղ բատարէա, ամբողջ ճակատի վրա կրակ բացեց, իսկ յետոյ յարձակում գործեց ամբողջ ճակատի վրա։ Երեկոյեան մօտ ութ ժամին հակառակորդը ամեն տեղ յետ մղվեց ահագին կորուստներով։ Ես գնում եմ դիրքերի վրա։» 2) յուլիսի 17-ին. «Այսօր առաւօտեան չորս ժամին եապօնացիները մօտաւորապէս հինգ դիվիզիայով յարձակում գործեցին մեր դիրքի դէմ Գայլի լեռների վրա։ Ի նկատի ունենալով ոյժերի ահագին գերազանցութիւնը և դիրքի թուլութիւնը, մեր զօրքերին հրաման տրվեց հեռանալ դէպի հետևեալ դիրքերը։ Տեղափոխութիւնը կատարվեց կատարեալ կարգով արտիլէրիայի պաշպանութեան տակ, որը իր անվրէպ կրակով մերձաւոր տարածութիւններից կատարելապէս կանգնեցրեց եապօնացիների առաջխաղացութիւնը։ Մեր կորուստները մեծ չեն։ Եապօնացիների կորուստները շատ նշանաւոր են։ Եապօնացիները յուլիսի 13-ի և 14-ի կուի ժամանակ ունէին մինչև 70,000 մարդ և պաշարող թնդանօթների նշանաւոր թիւ. զօրքերի ոգին գերազանց է։ Առողջական դրութիւնը լաւ է։»

ՄՈՒԿԴԷՆ։ (Սեփ. թղթ.)։ Ինկօուի գրաւումը նշանաւոր կերպով դիւրացրեց մթերքների հայթայթումը եապօնական զօրքին, որովհետև եապօնացիները իրանց ձեռքում ունեն Շանխայգուան-Ինկօու երկաթուղիական գիծը։ Նոյն գծով նրանք տեղափոխում են զօրքեր դէպի Սինսինտին։ Մնում է բաց, թէ որքան մի այդպիսի երևոյթ, եթէ նա կը հաստատվի, համապատասխան է Չինաստանի չէզոքութեան վերաբերեալ հարցին։—Արևելեան և հարաւային զօրաբաժինների կռիւների մէջ յուլիսի 17-ին և 18-ին մեր կողմից մասնակցում էին բացառապէս վերջապահ զօրամասեր, որոնց նպատակն էր միայն ժամանակաւորապէս բռնել հակառակորդին։ Մեր զօրքերի հեռանալը երկու ճակատների վրա էլ կատարվեց զօրքի աւելի կենտրօնացրած դրութիւն ստեղծելու նպատակով։ Նահանջումը տեղի ունի հակառակորդի գերազանց ոյժերի ճնշման տակ։ Հակառակորդի ձեռին ընկած թնդանօթները նրանք կռուով չառան, այլ մենք թողինք, որովհետև բոլորովին անպէտք էին դարձել թշնամու կրակից։

ՇԱՆԳՀԱՅ։ Եապօնացիները Նիւ-Չժուանում շրջաբերական հրատարակեցին, որի մէջ ասված է, որ եապօնացիները պատերազմ են մղում ժողովուրդը ռուսական բռնակալութիւնից փրկելու և Մանջուրիան—թագաւորող դինաստիայի հայրենիքը ազատելու նպատակով։ Շրջաբերականը վերջանում է կոչով, հրաւիրելով ենթարկվել եապօնական օրէնքներին։

ՄՈՒԿԴԷՆ։ (Սեփ. թղթ.)։ Լուրերի համեմատ, հարաւային ճակատի մեր զօրքերը հեռանում են Խայչէնից դէպի Անշադժանեան բարձունքները։ Կարծում են, որ այստեղ կարող է տեղի ունենալ կտրական ճակատամարտը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Հեռաւոր Արևելքում պատերազմի ժամանակ չէզոք պետութիւնների իրաւունքներին վերաբերեալ յայտարարութիւնը, որ պետական քարտուղարն ուղարկել է մայիսի 28-ին շրջաբերական հեռագրով, ընդհանուր գծերով հետևեալն է պարունակում. եթէ համաձայնվել սկզբունքով այն բաների հետ, որ ածուխը և այլ վառելիքը, ինչպէս և բամբակը անպայման կօնտրաբանդա են կազմում, այն ժամանակ այդ վերջ ի վերջոյ կարող է առաջ բերել այն, որ չէզոք պետութիւնները կը զրկվեն հնարաւորութիւնից ծախել պատերազմող կողմերի մասնաւոր անձանց առ հասարակ բոլոր այն առարկաները, որոնք կարող են ծառայել պատերազմական նպատակների համար։ Սկզբունքի այդ տեսակ առաձգական բացատրութիւնը, որի համաձայն ածուխը և այլ վառելիքը և բամբակը անպայման համարվում են կօնտրաբանդա միայն նրա համար, որ այդ առարկաները տրվում են չէզոք պետութիւնների կողմից պատերազմող կողմերի պաշարված նաւահանգիստները, կը խախտէ չէզոք առևտրի արդար օրինական իրաւունքները։

ԼԻՍՍԱԲՕՆ։ Յուլիսի 26-ի երեկոյեան, մօտ 11 ժամին, քաղաքում և շրջականներում զգացվեց հողի երերումն, որ ոչ մի վնաս չը պատճառեց։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Սաստիկ երկրաշարժ եղաւ։ Ծանր վնասված են շատ հասարակական շինութիւններ. մարդկային զոհեր չեն եղել։

Կ. ՊՕԼԻՍ։ Իլդզ-Քիոսկի յանձնարարութեամբ, Բ. Դուռը պատրաստում է պատասխան դաշնագիր պետութիւնների դեսպանների յայտարարութեան ժանդարմերիայի օֆիցերների թուի աւելացման մասին։ Պատասխան-

ների մէջ յայտարարվում է, որ այդ աւելացումը անհրաժեշտ չէ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Ի պատասխանի հարցապնդումին, Պէրսին յայտնեց, որ Անգլիայի և Գերմանիայի մէջ կնքված չը կայ դաշնագիր Եգիպտոսին վերաբերեալ անգլօ-ֆրանսիական համաձայնութեան յօդուածի մասին, բայց Գերմանիան, Աւստրօ-Ունգարիան և Իտալիան ոչ միայն համաձայնութիւն են տուել, ինչպէս և Ռուսաստանը, խեդիվի հրամանագրին, այլ և պարտաւորվել են չը խափանել Անգլիայի գործունէութիւնը Եգիպտոսում, ոչ պահանջելով Եգիպտոսի անգլիական գրաւման ժամանակամիջոցի որոշումը, ոչ ուրիշ ոևէ եղանակով։ Միւս կողմից, անգլիական կառավարութիւնը հաւատացրել է այդ պետութիւններին, որ ապահովում է նրանց առևտրի համար երեսուն տարվայ ընթացքում ամենաշատ նպաստաւորված պետութեան իրաւունքները և պէտք է յարգէ այն իրաւունքները, որ նրանք վայելում են դաշնագրերի, պայմանների և սովորոյթների իրաւունքի հիման վրա։ Ցիշեալ պետութիւնների դպրոցները միշտ կը վայելեն նոյն ազատութիւնը, ինչ որ անցեալում։ Եգիպտական ծառայութեան մէջ գտնվող այդ ազգութիւնների պաշտօնեաները չեն դրվի աւելի քիչ նպաստաւոր պայմանների մէջ, քան նոյն ծառայութեան մէջ գտնվող անգլիական պաշտօնեաները։

ԹԱՒՐԻԶ։ Ամեն կողմից մխիթարական լուրեր են հասնում խօլերայի մասին։ Հաւաստիացումն կայ, որ այստեղ ամենևին խօլերա չի լինի։—Թիւրքական սահմանագլխի վրա քիւրդերը անկարգութիւններ են անում և նրանց զսպելու համար ուղարկված է հեծելազօրքի մի խումբ։

Կ. ՊՕԼԻՍ։ Ամերիկական դեսպանութիւնը յայտնում է, թէ որովհետև Ելդզի և Բ. Դրան առաջ ձեռք առնված բոլոր միջոցները, ծագած հարցերի լուծման համար, ճնցին առանց հետևանքի, չը նայելով բազմապատիկ խոստումներին, ամերիկական դեսպանը այժմ դադարեցնում է բանակցութիւնները և խնդիրները կը քննվեն անմիջապէս Բ. Դրան և պետական քարտուղար Հէյի միջև։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆՄԱ ՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ՀԻԴՕՂԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժու՝ ւն։
Զ. Ի. ԲԱ ԵՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳԱԲԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Սօլոդով ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.
Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՀԵՐԲՐԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՑԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (Ե.ո.) 6—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Բժշկ. Բ. Նաւասարդեան
տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ո. կ. Ե. հ.) 45—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տեր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւոր պէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններ. ունի բէնտգէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825.
(շ. Ե. հ. չ.) 66—105

Արիստակես եպիսկոպոս Սեդրակեանի
«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒԹԻՒՆԸ»
անունով պատմական տեսութիւնը. Մասն 1-ին։
Ծախվում է «Կենտրօնական» և «Գուտտէնբէրգ» գրախանութներում։
Գինն է 1 ր. 50 կոպէկ։

Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմական դպրոցում կան արձակ դասեր. ընդհանուր պատմութեան, ռուսաց պատմութեան, հայոց պատմութեան և աշխարհագրութեան թւով 17, որի համար նշանակված ռոճիկն է նոր ծառայութիւն մտնողների վերաբերմամբ 1020 ռուբլի, իսկ 5, 10 և 15 տարի ծառայողների համար դպրոցական ասպարէզում ռոճիկը աւելանում է 72, 144 և 216 ռուբլիով։ Ցանկացողները պէտք է խնդրամատոյց լինեն դպրանոցի տեսչութեանը, ներկայացնելով իրանց աւարտման (համալսարանական-լեզուագիտական և պատմական բաժնի), նախկին ծառայութեան և անձնավստահութեան վկայականները (свидѣтельство о благонадежности) մինչև օգոստոսի 5-ը։
3—10 Տեսուչ դպրանոցի Գ. Զաբրբխեան

Լոյս տեսաւ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
ԱՐԱԶԸ
(Պատմուածքների ժողովածու)
Գինն է 80 կոպ.
Դիմել «Գուտտէնբէրգ» և «Կենտրօնական» գրավաճառանոցներին և հեղինակին՝ Тифлисъ, Редакція „Мурчъ“. (ո. չ.) 3—10

Կենտրօնական
գրավաճառանոցում, Թիֆլիս, վաճառվում են հետևեալ գրքերը.
Ահարոնեան Ա., Իտալիայում, քանևինն պատկերներով, Թիֆլիս, 1904 թ. գ. 1 ր. 50 կ. փառակազմ 2 ր.
» Մրբկի սուրբը, Թիֆլիս, 1903 թ. գ. 1 ր., փառակազմ 1 ր. 50 կ.
Լէօ, Ս. Մեսրոպ, Թիֆլիս, 1904 թ. գ. 75 կ.
» Հայկական տպագրութիւն, ա. մասը, հատ. երկր, Թիֆլիս, 1902 թ. գ. 1 ր. 50 կ.
» Յովսէփ կաթողիկոս Արղութեան, փառակազմ 1 ր. 20 կ.
Թումանեան Յովհաննէս, Բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1903 թ. գ. 3 ր.
Մէլիք-Թանգեան Ն. վարդ. Հայոց եկեղեցական իրաւունքը, ա. գ. 1903 թ. գ. 1 ր. 50 կ.
Սօլովեան Յովակիմ, Մեռած ծովում, վէպ երեք մասից բաղկացած, Մոսկվա, 1902, 1 ր.
Վաղով Իվան, Լծի տակ, վէպ բուլղարների կեանքից, Ս. Պետերբուրգ, 1902 թ. գ. 1 ր.
Վերոյիշեալ գրքերից միանուագ 10 ր. գնողները քաղաքում 10% զեղչ են ստանում, գաւառացիք ճանապարհածախս չեն վճարում. վճարը կանխիկ։ (հ) 3—3

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐԵՐ
Աշակերտաց համար

		Ր.	Կ.	
1.	Դասատետր կրօնի I տարի	—	25	25% զ.
2.	» » II »	—	20	20% զեղչ
3.	» » III »	—	30	
4.	Հին-ուխտ (ընդարձակ) .	—	45	
5.	» (համառօտ) . .	—	35	
6.	Նոր-ուխտ . . .	—	40	
7.	Գործք առաքելոց . .	—	40	
	Ուսուցչաց համար			
8.	Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի . .	1	75	35% զեղչ
9.	Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի . .	2	5	
10.	Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ. . .	1	50	
11.	Ուսուցումն քրիստոնէական կրօնի Ե. . .	—	50	

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.
1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Ком. мерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».
—
Դասագրքերիս պահեստը ամառս գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրաղեանցի մօտ (Карвансарай Тамамшева мануфактурный магазинъ А. Амирагова).
Ցանկացողները նրանից էս կարող են պահանջ անել։
Սահակ քահ. Սահակեանց
յ. ա. օ. յլ.—օ. օր-մէջ ս. ա. օ. 35—66

Թիֆլիսի Ժողովարան
Հինգշաբթի, յուլիսի 29-ին, 1904 թ. նշանակված է երկրորդ ընդհանուր ժողով պ.պ. անդամներից կանդիդատ առաջարկված անձերի քուէարկութեան և ուրիշ հարցեր վճռելու համար։ (13, 18, 29) 3—3

ՌԱՇՏԻ հայոց դպրոցների համար հարկաւոր են երկու ուսուցիչ մաթեմատիկայի, պատմութեան և երգեցողութեան համար։
Դիմել «Մուրճի» խմբագրատուն, Սիրաք Գրիգորեանին։ (Ե. հ.) 2—2

„Գուտտէնբերգ“ գրավաճառանոցում վաճառվում են
«Հայոց նոր վկաները», ժողովրդական հրատարակութիւն, երկու հատոր, կազմեցին Մանանդեան և Աշառեան, 1 ր.
«Դաւիթ Սնյաղթի խնդիրը», Մանանդեանի, 25 կ.
«Բաղկեդոնի ժողով և Հայաստանեայց եկեղեցի», Ս. Վ. Պարոնեանի, 1 ր.
«Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ», Բ. Խալաթեանի, 50 կ.
«Մի կարծիք հայ նախարարութեան մասին», Բ. Խալաթեանի, 50 կ.
«Սիսուան», համառոտութիւն. պատկերազարդ, Ալիշանի, 1 ր.
«Ս. պատարագի երգեցողութիւն», նորոսների համար, կազմեց Շաման—Սիմէօն, 20 կ.
«Դաղթականի համառօտ կարծիքները», 50 կ.
«2 եպիսկոպոս, 2 վարդապետ և 2 քահանայ», թարգմ. և խմբ. Խորէն եպ. Ստեփանէ, 30 կ.
«Կապիտանի աղջիկը», Պուշկին, թարգմ. Յ. Կարապետեանի, 30 կ.
«Աղքատին պատիւը կամ Նախախնամութեան ժառը», Ալթունեանի, 2 ր.
«Գող Մժղօ», Վասպուրականի իրական կեանքից, գրեց Նշիկ Երէց, 80 կ.
«Մեծ մարդկանց մայրերը», Բլօկի, թարգմ. Արաբաջեանի, 50 կ.
«Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն և քաղաքական պակ», Արս. վարդ. Ղլտճեանի, 75 կ.
«Միակնութիւն և բազմակնութիւն», հրաւէր հիւս. երիտասարդ., Բիօրնս. թարգ. Ա. Եղիգ. 30 կ.
«Պատմ. հայոց ի սկզբանէ միչ ցԱրշակունի հարստ. հաստատ.», գրեց Սկսնակ, Բանասէր, 1 ր.
«Հերման և Դորոթէա», գերմ. թարգմ. Յ. Պետրոսեան, 40 կ.
«Գոյութեան կռիւ», բժ. Ա. Բուդուղեանի, 20 կ.
«Մտերմական խորհուրդներ պատանիներին», Ա. Բուդուղեանի, 20 կ.
Մէկ կամ երկու բուբլու գրքեր ցանկացողները կարող են ուղարկել և պօստային մարկաներ, Միայն ամեն մէկ բուբլուն պօստի ծախք պիտի աւելացնել 20 կ. մարկա։
Դիմել՝ Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Дворцовая), Г. Галустяну. 1—2

ՄԻ ՔԻՉ ԺԱՄԱՆԱԿ ԷԼ։
70% **ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ** 70%

Վերջին ժամանակի մրցումը, պահեստում եղած ապրանքի մեծաքանակ պաշարը և ֆիրման տարածելու նպատակը դրդում են մեզ չը տեսնված էժան գներով՝ ՄԻԱՅՆ 5 Ր. 90 Կ., ՊՕՍՏԻ ԾԱԽՍՈՎ, հետևեալ օգտակար և արժէքաւոր 8 իրերը. 1) Ժամացոյց-սեւ, ագռաւագոյն պողպատից տղամարդկանց կամ կանանց կամ տղամարդկանց՝ վերադիր ոսկուց (պնդապէս ոսկեջրած՝ կրակի միջոցով), շատ նուրբ, ամուր մեխանիզմով և 6 տարվայ երաշխաւորութեամբ։ 2) Շղթայ—նոր ոսկուց, սնամէջ կամ նիկկելից կամ կանանց՝ վզից կախելու։ 3) Նոր ոսկուց բրելօկ «Կոմպաս» կամ «Բինօկլ», պիկանտ տեսարաններով կամ ուրիշ բան։ 4) Զամբեռ քսակ՝ ժամացոյցը փչանալուց պահպանելու համար։ 5) Գրպանի էլեֆտրական լամպեր, որ տալիս է զօրեղ լոյս կամ 56 պրօբանի ոսկուց մատանի կամ կաուչ պորս-սիգար կամ «Իմպերիալ» ստերէօսկոպ 25 պատկերներով։ 6) Գրչահատ լաւագոյն արտասահմանեան պողպատից կամ ծխամուրճ՝ մի գործիք անվնաս ծխելու համար կամ ծալովի մկրատ։ 7) կաուչ դրամապանակ մէկ կարից 7 բաժանմունքներով, մեխանիքական փականքով և կնիքով—անուան, հայրանուան և ազգանուան համար։ 8) Թղթապանակ արտասահմանեան կաշվից, այցետոմսերի, թղթերի և զօրամէնտների համար կամ մի զոյգ գինթեր 56 պրօբի ոսկուց՝ ակներով, կամ «Էդիսօն» կոչված աւտոմատիական մեխանիքական վառիչ (լիապէս փոխարինում է լուցկուն)։ Այդ բոլորն ուղարկում ենք առանց գրաւականի, վերադիր վճարով, միայն 5 ր. 90 կ.-ի ճանապարհածախսով։ Ծածկված ժամացոյց—1 ր. 50 կ. աւելի գնով։ Պահանջներն ուղղել հետևեալ հասցէով. Главный складъ часовъ Торгов. Дома Ш. Якобсона, Варшава, Твердая № 22/225. հ. 2—3

ՀԱՅԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
Ի. Ե. ԲՐՕՆ ՖՕՆ-ԲՐԻՆՆԵՐԻ
հիմնած
Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ. № 161.
Դասարանների նպատակն է երկու սեռի անձերին համեմատաբար կարճ միջոցում տալ տեսականապէս և գործնականապէս վերջաւորված առևտրական կրթութիւն։ Դասարանները պատրաստում են հաշուապահներ, թղթակիցներ, կօնտօրշչիկներ և այլն պետական և առևտրական հաստատութիւններում ծառայելու համար։
Դասարանները բաղկացած են 3 մասերից. I պատրաստական մասում ընդունվում են երկրաչափեան դպրոցներն աւարտած անձերը, II-ում—հաշուապահական մասում՝ պրօգիմնազիաներ կամ քաղաքային դպրոց աւարտած անձեր և III զուտ գործնական մասում՝ հաշուապահութիւն և առևտրական թուաբանութիւն գիտեցող անձեր։
Ամեն մի բաժանմունքում պարապմունքները տևում են կէս տարի։
Այն անձերը, որոնք չունեն իրանց ուսման մասին պէտք եղած դօկումենտները, ենթարկվում են որոշված քննութեանը։
Պարապմունքների տեղութիւնը կախված է կրթական ցեղից։
Հաշուապահական դասարանները, ինչպէս մասնագիտական ուսումնական հաստատութիւն, դրված են շատ օրինակելի ձևով. դասարաններն ունեն գրադարան, թանգարան և Կովկասում առաջին (1890 թ-ից գոյութիւն ունեցող) Հաշուապահական կաբինետ։
Ներկայ ուսումնական տարում դասատուներ են հրաւիրված լաւագոյն մասնագէտ-մանկավարժներ։ Ուսման վարձ. I բաժնում—60 ր., II-ում—75 ր. և III-ում—50 ր.
Զբաղմունքներն ամեն օր են, 5—8-ը ժամը երեկոյեան։
Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 15-ից։ Մանրամասն տեղեկութիւններ և ծրագիրը տրվում է ամեն օր դասարանների գրասենեակում առաւօտեան 9—12-ը և երեկոյեան 5—8-ը։
Հեռախօս № 286. (հ. շ.) 9—15

Կենտրօնական Գրավաճառանոցում վաճառվում են
հետևեալ նոր գրքերը՝
Աղանեանց Գ. աւագ քահ., Դիւան Հայոց պատմութեան, գիրք Զ. Դաւիթ կաթողիկոս 1801—2, Թիֆլիս 1904 թ. գ. 4 ր.։
Մուրացան, Երկասիրութիւններ ա. հ. Նոյի Ագռաւը, Առաքեալը, Խորհրդաւոր վիանձնուհի, Թիֆ. 1904 թ. գ. 1 ր. 50 կ.։
Շիրվանզադէ, Ժողովածու երկեր, հ. ա. գ. 1 ր. 50 կ., հ. բ. գ. 1 ր. 50 կ., հ. գ. գ. 1 ր. 50 կ., երեք հատորը միասին գնողները դ. հատորը ձրի են ստանում։
» Քառս, վէպ. Բագու 1899 թ. գ. 1 ր. 50 կ.։
» Եւգինէ, դրամա 3 գործողութեամբ, գ. 50 կ.։
» Արտիսաը, 1903 թ. գ. 15 կ.։
Պուշկինանց Պերճ. Հացի խնդիր, վէպ. Բագու 1904 թ. գ. 1 ր. 50 կ.։
» Սօս և Վարդիթեր, վէպ. Բագու 1903 թ. գ. 1 ր. 20 կ., փառակազմ 1 ր. 70 կ.։
Զիւանի Քնարը. ա. և բ. հատորը, գ. 1 ր. առանձին 50 կ.։
Ֆուլտոն և Սանֆենսօն, (շոգենաւի և շոքեկառքի հնարողները) գ. 15 կ.։
Վերոյիշեալ գրքերից միանուագ 10 ր. գնողները քաղաքում 10% զեղչ են ստանում, գաւառացիք ճանապարհածախք չեն վճարում. վճարը կանխիկ։
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (հ.) 2—3

Дозволено Цензурою. Тифлисъ, 28-го іюля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81